

## ԱՐԺԱՆԱԳԱՏԻՎ ՀՈՐԵԼՅԱՆ

### Նշվեց ՀՀ ԳԱԱ 75 –ամյակը



## Հայաստանը պետք է լինի ինտելեկտուալ, զարգացած տեխնոլոգիական երկիր

Նիկոլ Փաշինյանը մասնակցել է ԳԱԱ 75-ամյակին նվիրված միջոցառմանը

Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը երեկ մասնակցել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջոցառմանը, որին ներկա էին ԳԱԱ 75-ամյակի հորեյական միջոցառումների շրջանակում Հայաստան ժամանած ավելի քան մեկ տասնյակ երկրների գիտությունների ակադեմիաների նախագահներ, միջազգային գիտական կառույցների ղեկավարներ, հայտնում են ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունից:

Հնորիավորելով ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-րդ տարեդարձի առթիվ՝ վարչապետի պաշտոնակատարը նշել է. «Այսօր մեր պարտքն է հարգանքի և երախտի մեծ զգացումով հիշել նրանց, ովքեր հեռավոր 1943 թ. հիմնեցին այս հաստատությունը: Պատերազմի ծանր տարիներին իրականացնել նման ձեռնարկ նշանակում էր ոչ միայն անվերապահորեն հավատալ հաղթանակին և խաղաղության հաստատմանը, այլև անվերապահորեն հավատալ Հայաստանին, նրա ժողովրդին, մեր գիտության մեծ ներուժին ու ապագային: Սա սխրանք էր, որ գործել են հայ գիտության մեծ երախտավորները, և

մենք շնորհակալ ենք նրանց այս հարուստ ժառանգության համար»:

Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ ԽՍՀՄ տարիներին ՀՀ ԳԱԱ-ն մասնակցել էր ինքնուրույն և ինքնագիտակցության կարևոր մաս էր. «Բոլոր գիտեք, որ Խորհրդային Միությունում ազգային ինքնությանը շատ մեծ տեղ չէր տրվում, և ավելի շատ ընդունված էր ընդգծել ինտերնացիոնալիզմի տրամաբանությունը: Այս առումով մեր ԳԱԱ-ն ազգային ինքնության և ինքնագիտակցության, ազգային հպարտության կարևոր իմաստալիտ էր: Սովետական Հայաստանը ԽՍՀՄ-ում ուներ այնպիսի տեխնոլոգիական և գիտական դերակատարում, ինչպիսին ժամանակակից աշխարհում ունի Սիլիկոնային հովիտը: Այս իրավիճակը ստեղծված էր մասնավորապես հարգանքով շնորհիվ»:

Վարչապետի պաշտոնակատարի խոսքով՝ ԽՍՀՄ փլուզումից հետո մեծ ջանքեր գործադրվեցին, որպեսզի Հայաստանի ԳԱԱ համակարգը հարմարվի նոր իրողություններին և արդյունավետ գործելու հնարավորություն ստանա, բայց անցումային շրջանի բարդությունները հնարավորություն չտվեցին, որպեսզի Հայաստան- ➤

## Մեկնարկեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին նվիրված հորեյական միջոցառումները

Հոկտեմբերի 17-ին մեկնարկեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին նվիրված հորեյական միջոցառումները:

Հանդիսավոր միասին ժամանակ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային շնորհավորեցին Բելառուսի, Մոլդովայի, Ղրղզստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Տաջիկստանի, Սլովենիայի, Չեխիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի պատվիրակությունների ղեկավարները, Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ Գրեհամ Քեյը, ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ Ազիբայ Սմագուլովը, Եվրոպական ակադեմիայի փոխնախագահ Օլե Պետերսոնը:

«Պատահական չէ, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային շնորհավորելու են եկել գիտնականներ տարբեր երկրներից՝ ԱՊՀ երկրներից, Բալթյան երկրներից, Եվրամիությունից: Դա խոսում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի միջազգային ճանաչման մասին»:

Ամբողջ աշխարհը գիտի, թե որքան ուժեղ է Հայաստանի գիտությունների ակադեմիան: Եղել է ուժեղ և հիմա էլ է ուժեղ: Այն ակադեմիայի ոչ միայն կառուցվածքի պահպանման լավ օրինակ է, այլև՝ գիտության և մշակույթի էլիտար հանրության պահպանման օրինակ...», - այսպիսի գնահատական տվեցին ՀՀ ԳԱԱ-ին հյուրերը:

ՀՀ ԳԱԱ-ի 75-ամյակի առթիվ, գիտական նվաճումների և գիտության զարգացման համար ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն արժանացավ Մոլդովայի և Ուկրաինայի գիտությունների ակադեմիաների ոսկե մեդալների, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուբուրյանն արժանացավ Բելառուսի գիտությունների ակադեմիայի ոսկե մեդալի:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Սլովենիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Տադեյ Բայոլը ստորագրեցին համագործակցության համաձայնագիր:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց ՀՀ ԳԱԱ 75-ամյակին նվիրված ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական կազմակերպությունների նվաճումները, գիտական հետազոտությունների կիրառական նշանակության արդյունքները և ՀՀ ԳԱԱ-ի ինովացիոն պոտենցիալը արտացոլող գիտատեխնիկական նախամոնուշները:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ստեղծվել է 1943 թ. նոյեմբերին՝ որպես Հայաստանի բարձրագույն գիտական հաստատություն, որը կոչված է՝ միավորելու գիտնականների ջանքերը հիմնարար հետազոտություններ իրականացնելու, հայ ժողովրդի հարուստ հոգևոր ժառանգությունը երևան հանելու և վերափոխակերպելու, տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնախնդիրների տեսական և գործնական լուծման և երկրի ազգային անվտանգության ապահովման ուղղված աշխատանքների կատարման համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



# Հայաստանը պետք է լինի ինտելեկտուալ, զարգացած տեխնոլոգիական երկիր

➤1 մի տնտեսությունը, մասնաշաղկապով և օբյեկտով պատճառներով, կարողանա շարունակել այն դերակատարումը, որն ուներ խորհրդային միության տարիներին: «Ես այս ամենը հիշում եմ և ընդգծում եմ ոչ միայն ուղղակի որպես հուշ, այլ ուզում եմ սրանով ընդգծել այն ծրագիրը, այն ամբիցիան, որ ունի ՀՀ կառավարությունը, որը ձևավորվել է ոչ բռնի, թավշյա ժողովրդական հեղափոխության արդյունքում. մենք ուզում ենք Հայաստանը դարձնել նույնպիսի տեխնոլոգիական առաջատար երկիր, ինչպիսին մա էր ԽՍՀՄ տարիներին և պայմաններում: Դրա համար մենք ունենք ամենակարևորը՝ մարդկային ներուժը. մարդիկ, ովքեր իրենց մեջ կրում են այդ գիտելիքը, կարող են փոխանցել այն և, կարևորը, ավանդույթներ, որոնք կապված են ԳԱԱ գործունեության հետ: Մեծ հույս ունենք, որ Հայաստանի գիտությունը, կառավարությունը և հանրությունը այս հար-

ցի շուրջ յուրօրինակ կոնսենսուս են ձևավորելու և ՀՀ-ում նոր տեխնոլոգիական առաջընթաց, նոր տեխնոլոգիական հեղափոխություն իրականացնելու հնարավորություն կստեղծեն», -ի՞ր ելույթում ընդգծել է կառավարության ղեկավարի պաշտոնակատարը՝ հավելելով, որ քաղաքական վերջին փոփոխությունների արդյունքում Հայաստանում գիտական, տեխնոլոգիական, ինտելեկտուալ գործունեության համար նոր հեռանկարներ են բացվում: «Հայաստանը պետք է լինի ինտելեկտուալ, զարգացած, տեխնոլոգիական երկիր, որովհետև մենք հավատում ենք, որ բացարձակապես բոլոր խնդիրների լուծման ամենակարևոր գործիքը մարդկային միտքն է, որն անսահման է: Դա նշանակում է, որ մեզմիջ յուրաքանչյուրի, յուրաքանչյուր պետության, յուրաքանչյուր ոլորտի առջև բացված են անսահման հնարավորություններ, և հույս ունենք, որ կկարողանանք

օգտագործել այդ անսահման հնարավորությունները», -շեշտել է Նիկոլ Փաշինյանը: Իր գնահատանքը հղելով բոլոր գիտնականներին, ովքեր ստեղծել են Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան, աշխատել են այնտեղ և իրենց աշխատանքով կարողացել են բարձրացնել կառույցի հեղինակությունը՝ Նիկոլ Փաշինյանը վստահություն է հայտնել, որ հայ գիտնականները մեր ժողովրդին հպարտանալու նորանոր առիթներ կտան: Վարչապետի պաշտոնակատարը նաև շնորհակալություն է հայտնել արտերկրից ժամանած գիտնականներին՝ ԳԱԱ 75-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու և միջազգային համագործակցության ամենաարդյունավետ օրինակներից մեկը ցույց տալու համար: Հանդիպմանը մասնակից երկրների և միջազգային գիտական կառույցների ղեկավարները շնորհակալություն են հայտ-

նել Նիկոլ Փաշինյանին հանդիպման համար և բարձր գնահատել Հայաստանում գիտության ոլորտի նկատմամբ ցուցաբերվող պետական հոգածությունը: Նրանք ողջունել են ՀՀ վարչապետի պաշտոնակատարի հնչեցրած ուղեցուցիչները գիտության զարգացման, ՀՀ-ն առաջատար տեխնոլոգիական երկիր դարձնելու գործում և արդյունավետ գնահատել ԳԱԱ հետ համագործակցությունը: Նիկոլ Փաշինյանը նաև շրջայց է կատարել ՀՀ ԳԱԱ 75-ամյակին նվիրված ցուցահանդեսի տաղավարներով, ծանոթացել ակադեմիայի գիտահետազոտական կազմակերպությունների ձեռքբերումներին, գիտական հետազոտությունների կիրառական մշակակութային արդյունքներին և նորարարական ներուժն արտացոլող գիտատեխնիկական մասնամուշեկներին

## «Եկել է ժամանակը, որ հայ ժողովուրդը ծնի իր Նոբելյան մրցանակակիրներին»

Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի ելույթը ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում

«Հարգելի գործընկերներ, ինձ համար իսկապես մեծ պատիվ է մասնակցել այս հոբելյանին, որովհետև ես մախ և առաջ ինձ համարում եմ հայկական գիտական համայնքի անդամներից մեկը, այսինքն՝ ձեզմիջ մեկը:

20-րդ դարում խորհրդային Միությունում շատ լավ հասկանում էին, թե ինչ են հայկական միտքը, հայկական մտավոր ներուժը, և դա է պատճառը, որ պատերազմի տարիներին Հայաստանում ստեղծվեց գիտությունների ակադեմիա, որը դարձավ մեր գիտական մտքի շարժիչ ուժը:

Ես հպարտությամբ եմ ուզում հիշատակել Հայաստանի գիտությունների ակադեմիայի բոլոր նախագահներին՝ առաջին և հիմնադիր նախագահ ակադեմիկոս Դավիթ Օրբելուն, ակադեմիան իրական գիտական բարձունքի հասցրած ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին, անկախության առաջին տարիներին ակադեմիան պահպանած Ֆադեյ Սարգսյանին և, իհարկե, նշել ակադեմիայի ներկայիս նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին:

Գիտությունների ազգային ակադեմիայի հոբելյանը լավագույն առիթն է խոսելու գիտության մասին:

Միտքի՝ գործընկերներ,

Ցանկանում եմ անդրադառնալ մի քանի կետերի, որոնք, կարծում եմ, կարևոր են ազգային ակադեմիայի համար: Դրանք վերաբերում են թե՛ ժամանակակից գիտության զարգացման միտումներին և թե՛ նախկին ավանդույթների զարգացմանը:

1. Կապեր մախկին խորհրդային գիտական կենտրոնների հետ:

Մենք պետք է ոչ միայն պահպանենք, այլև խորացնենք 75 տարվա գիտական ավանդույթներն ու կապերը մախկին ԽՍՀՄ տարածքի գիտնականների ու գիտահետազոտական կենտրոնների հետ: Ամերիկայից մինչև Չինաստան, Ռուսաստանից մինչև Հնդկաստան: Եվ այն պետք է ուղղված լինի կոնկրետ թիրախների և նպատակների:

2. Կարիք ունենք և պարտավոր ենք ընդլայնել ակադեմիայի կապերը միջազգային գիտահետազոտական բոլոր կենտրոնների հետ:

Մենք պետք է լինենք միջազգային գիտական գործընթացների մասը, համահունչ լինենք ժամանակի պահանջներին: Համագործակցությունը պետք է լինի իրական ծրագրերի շուրջ, համաշխարհային բոլոր կենտրոնների հետ՝ Ամերիկայից մինչև Չինաստան, Ռուսաստանից մինչև Հնդկաստան: Եվ այն պետք է ուղղված լինի կոնկրետ թիրախների և նպատակների:

3. Մենք պետք է համախմբենք աշխարհով մեկ տարածված մեր հայկական ակա-



դեմիական գիտական ուժը:

Դա պետք է լինի գործնական և արդյունավետ հարաբերությունների տեսքով: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան պետք է լինի գիտությունների համահայկական ակադեմիա, համահայկական գիտական համախմբող մարմին:

4. Ֆունդամենտալ և կիրառական գիտություններն աստիճանաբար մերձենում են:

Դրա թարմ օրինակն իմ անձնական կյանքում հետևյալն է. ընդամենը մի քանի շաբաթ առաջ Nature ամսագրում մեծ հետաքրքրությամբ ընթերցում էի հոդված՝ նվիրված Ջեյմս Էլիսին և Տասուկու Հոնդային, ովքեր քաղցկեղի թերապիայի բնագավառում բացահայտումների համար այս տարի Նոբելյան մրցանակի են արժանացել: Սա հիասքանչ հայտնագործություն է, բայց երբ դիտարկում ես այդ հայտնագործության պատմությունը, իրականում խոսքը երկու անհատի մասին չէ, այլ վերջին 50 տարիների ընթացքում կատարված հսկայական, ֆունդամենտալ աշխատանքի մասին, որի արդյունքում բազմաթիվ հայտնագործու-

յուններ են կատարվել՝ սկսած Դ քիմիայից մինչև իմունային համակարգի աշխատանքի մեխանիզմները: Եվ արդյունքում ունենք նոր դեղամիջոց, որը, կարծում եմ, ապագա մի քանի տարիների ընթացքում հասանելի կլինի աշխարհով մեկ: Սա կրկին մեկ օրինակ է, թե ֆունդամենտալ գիտությունն ինչպիսի կարևոր մշակակություն ունի:

Եվ ընդհանրապես, գիտությունը ստեղծագործական գործընթաց է: Եվ այսօրվա աշխատանքի արդյունքը կարող է տեսանելի լինել եւ գնահատվել տարիներ անց: Պարզապես գիտությունից կիրառություն ընկած ժամանակահատվածը, կրկնեմ, աստիճանաբար, տարեցտարի ավելի է կարճանում: Եվ ես կարծում եմ, որ ամեն ինչ պետք է արվի, որ մեր ֆունդամենտալ գիտությունը հնարավորության դեպքում ուղղված լինի կիրառական արդյունք ստեղծելուն:

5. Քսանմեկերորդ դարում ամեն ինչ շատ արագ ընթացք ունի՝ թե՛ փոփոխությունները, թե՛ գործողությունները, թե՛ մտածողությունը:

Մտնենում են գիտության, տեխնիկայի ազատ և անկախ գործունեության սահմանները: Գիտությունը մասնաշաղկապով է ելքից: Եվ ժամանակակից աշխարհում գիտության մեջ ներդրում կատարվում է մեկ եկամուտ ստանալու նպատակով: Հետևաբար, երբ մենք խոսում ենք տնտեսության կամ բիզնեսի միջավայրը գրավիչ դարձնելու մասին, պետք է մեկ խոսքը համապատասխան գիտական միջավայրը գրավիչ դարձնելու մասին:

Այս առումով էական է Հայաստանում տնտեսագիտական մտքի զարգացումը: Մենք ունենք տնտեսագիտական մտքի փայլուն օրինակներ, ամերիկացի է, որ դրանք կիրառվեն տնտեսության մեջ և հնարավորության դեպքում հայտնի դառնան մեկ դրսում:

6. Գիտության հանդեպ վերաբերմունքը պետք է սկսվի կրթական օջախից: Կրթական համակարգը, բացի դասական կրթություն տալուց, պետք է ծառայի երի-

տասարդների կարողությունների բացահայտմանը և նրանց կապի իրենց ապագա գիտական գործունեության հետ: Կարծում եմ, որ ակադեմիան ինքը պետք է վաղ շրջանից նպաստի այն երիտասարդ գիտնական կադրերի պատրաստմանը, որոնք ապագայում դառնալու են ակադեմիական համակարգի մասը: Եվ ընդհանրապես, գիտակրթական համակարգը մեզանում օպտիմալացման և ինտելեկտուալ կարիք ունի:

7. Պետք է շատ ուշադիր ել նվիրումով զարգացնենք ու խորացնենք ուսումնասիրությունները և հետազոտությունները հումանիտար գիտությունների, արվեստի, փիլիսոփայության, պատմագիտության ու հատկապես հայագիտության ոլորտում:

Այսօր ամերիկացիները կառավարող խորությամբ անդրադառնալ մեր ինքնուրույն, մեր տեսակին, մեր լեզվին, մեր ճանաչելիության հարցին, մեր քաղաքակրթական տեղին և դերին աշխարհում:

Հնարավոր չէ կառուցել հասուն, ամուր և մրցունակ հասարակություն ու երկիր՝ առանց արժեքներու մեր ողջ քաղաքակրթական անցյալը և ըստ այդմ նախագծելու մեր ապագան:

8. Գիտնականը մասնաշաղկապ է:

Գիտնականը մասնաշաղկապ է, մտավորական՝ իր մտածողությամբ, տեսակով, մշակույթով, կենսակերպով, ակտիվությամբ և տեսակետներով: Ամբողջական են մեծամունդ գիտնական, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի քաղաքագիտական բարձր ու խիզախ պահվածքը մեր ազգային զարթոնքի առաջին իսկ օրերին, նրա հզոր ելույթները խորհրդային Միության Գերագույն խորհրդում:

Մեծագույն հարգանքի է արժանի Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, Հայաստանի ազգային հերոս, հռչակավոր գիտնական Վիկտոր Համբարձումյանի հավատարմությունը քաղաքացու և հայի բարձր կոչմանը: Բոլորս ենք հիշում նրա՝ Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի հաջադուլը Մոսկվայում՝ որպես աշակցություն արցախյան ազատամարտին:

Գիտնականը, մտավորականը պետք է ակտիվ լինի ոչ միայն գիտական և ստեղծագործական միջավայրում, այլև դրսևորվի որպես սկզբունքային քաղաքացի, անպայման ունենա բարոյական ու քաղաքացիական պարտքի հստակ գիտակցում:

Սրանք են այն մի քանի կետերը, որոնց մասին կուզեի ձեզ հետ խոսել:

Եկել է ժամանակը, որ Հայաստանը, հայ ժողովուրդը ծնեն իրենց Նոբելյան մրցանակակիրներին:



# ՀՀ ԳԱԱ-Ն ՊԱՏՐԱՍԿ Է ՔԱՅԼԵԼ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ

**ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ զեկուցումը ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում**

Հայաստանի Հանրապետության Մեծարգո Նախագահ

Վեհափառ Տեր

Հարգելի հյուրեր

Սիրելի հայրենակիցներ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյա հոբելյանական միջոցառումներին մասնակցում եմ՝ Հիմաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Վրաստանի, Մոլդովայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Չեխիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի ակադեմիաների պատվիրակությունները, ինչպես նաև եվրոպական միջազգային ակադեմիական կառույցների ղեկավարները: Հոբելյանական միջոցառումներին մասնակցում եմ նաև ԳԱԱ-ի արտասահմանյան անդամներ:

Հայաստանի Հանրապետության գիտական հանրությունը տոնում է Գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյա հոբելյանը:

75-տարիների ընթացքում հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնը դժվարին և բովանդակաշատ ուղի է անցել, մեծ գիտական նվաճումներ ձեռք բերել, արժանացել համաշխարհային ճանաչման:

Հայաստանում Սովետական կարգերի առաջին տարիներին հիմնականում Երևանում հիմնվում են գիտական տարբեր կառույցներ, սակայն անհրաժեշտ բարձր գիտական մակարդակով հետազոտություններ մինչև 1930 թվականը կատարվում էր Երևանի պետական համալսարանում, հայագիտության տարբեր բնագավառներում: 1935 թվականին Երևանում բացվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը ղեկավարում էր անվանի երկրաբան ակադեմիկոս Ֆ.Յու. Լևինսոն-Լեսսինգը:

1943 թվականի նոյեմբերին, երբ շարունակվում էր Հայրենական մեծ պատերազմը, ՀԽՍՀ կառավարության որոշմամբ հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Նորաստեղծ գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվում հանրահայտ արևելագետ ակադեմիկոս Հ. Օրբելին: Ակադեմիայի հիմնադիր կազմում ընդգրկվեց գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնական: Հ. Օրբելին միաժամանակ աշխարհահռչակ թանգարան էրմիտաժի տնօրենն էր և 1947թ. վերադարձավ Պետերբուրգ:

Ակադեմիայի պրեզիդենտ (նախագահ) ընտրվեց երիտասարդ համաշխարհային ճանաչման արժանացած, կազմակերպչական փայլուն ունակությունների տեր Վիկտոր Համբարձումյանը: Այս ընտրությունը Հայաստանի համար ունեցավ շատ կարևոր նշանակություն գիտության հետագա զարգացման համար:

Ակադեմիկոս Վ.Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակահատվածում Հայաստանի գիտությունների ակադեմիան կայացավ, ունեցավ ժամանակի ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնեց խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, ճանաչելի դարձավ արտասահմանում:

2009 թվականին սահմանվեց Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ, որը յուրաքանչյուր երկու տարին մեկ շնորհվում է աստղաֆիզիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում գիտական խոշոր ձեռքբերումներ ունեցած ականավոր գիտնականներին: Մրցանակաբաշխության նպատակն է հավերժացնել Վ. Համբարձումյանի հիշատակը, աշխարհին ներկայացնել Հայաստանի գիտությունը և նպաստել նշված գիտական ուղղությունների զարգացմանը:

1993 թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ է ընտրվում ճանաչված պետական գործիչ, գիտության և գիտական արտադրության անվանի կազմակերպիչ Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Նախագահի պաշտոնը մասնաձեռնեց բարդ՝ Հայաստանի երրորդ հանրապետության կազմավորման դժվարին ժամանակաշրջանում: 1991 թ. խորհրդային Միության փլուզումը, ծայրահեղ ծանր իրավիճակ ստեղծեց ինչպես տնտեսության, այնպես էլ գիտության ու մշակույթի բնագավառներում: Սկսվեց տնտեսության անկումը, խզվեցին միջպետական սերտ կա-



պերը, դադարեց ԽՍՀՄ հանրապետությունների ակադեմիաների համագործակցությունը: Համընդհանուր քաոսի պայմաններում առավել խառնակ ու օրհասական էր իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում՝ դարաբաղյան պատերազմի, շրջափակման, ավերիչ երկրաշարժի պատճառով:

Տնտեսական վերափոխումներին զուգահեռ հույժ կարևոր էր հոգաժողությունը գիտության հանդեպ՝ պահպանել գիտական հիմնական ուղղությունները, գիտական ներուժը, նախկին գիտական կապերն ու համագործակցությունը:

2006 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ ընտրվեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Գիտությունների ակադեմիայի առաջ ծառացել էին դժվարությամբ ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու, խորացնելու, գիտության զարգացման արդի մարտահրավերների ոգով ձեռնարկումներ կատարելու հիմնահարցերը: Նշված դժվարին ու բարդ խնդիրների լուծումը պահանջում էր գիտության բնագավառում իրականացնել բազմակողմանի վերափոխումներ, որոնք կնպաստեին գիտության զարգացմանը:

Արդյո՞ք բարեփոխումների իրականացումը գիտության առաջընթացին նպաստող անհրաժեշտություն էր, թե երկրում ընթացող բարեփոխումների շարքի միջոցառում: Այդ պատճառով անդրադառնանք գիտության ոլորտում առկա օբյեկտիվ իրողություններին:

- ԽՍՀՄ կազմում տասնամյակների ընթացքում ԳԱԱ-ն եղել է վիթխարի հզոր գիտական համակարգի մի մասը, ինչով էլ պայմանավորված էր գիտական ու գիտատեխնիկական մեծաքանակ կազմակերպությունների առկայությունը երկրում:

- Անկախության տարիներին գիտության անընդհատ թերֆինանսավորումը բացասաբար է ազդել նրա վերելքի վրա: Մասնագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եթե գիտության ֆինանսավորման չափը փոքր է ՀՆԱ-ի 1%-ից, ապա տվյալ երկրի գիտությունը չի կարող դրական ազդեցություն ունենալ նրա տնտեսության զարգացման վրա, իսկ ինքը՝ գիտությունը, աստիճանաբար կմահանա:

- Կադրերի թվաքանակը էական ու կտրուկ կրճատվեց: Եթե մինչև 1990թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ համակարգում աշխատում էր 7500 մարդ, ապա առ 01.01.2018թ. այն կիսով չափ նվազեց՝ 3750:

- Գիտական ինֆրակառուցվածքը ֆիզիկապես և բարոյապես մաշվել էր: Անկախության շրջանում համակարգի կառույցները հնարավորություն չեն ունեցել ժամանակակից սարքավորումներ ձեռք բերել: Հասարակության մեջ գիտական աշխատանքը և գիտաշխատողը ծայրահեղ ցածր վարկանիշ ունեին:

- Կառավարման համակարգն անհրաժեշտ էր դե-

մոկրատացնել՝ ղեկավար մարմինների ընտրություններին մասնակից դարձնելով նաև գիտաշխատողներին: Ընդհանուր առմամբ, գիտությունը հանդիպել է մեծ դժվարությունների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ էին վերափոխումներ՝ ոչ թե մոր դժվարություններ հարուցող, այլ նրա զարգացմանը նպաստող: Համակարգի գիտաշխատողները, այնուամենայնիվ, անկախության տարիներին, գիտության տարբեր բնագավառներում ունեցել են լուրջ գիտական արդյունքներ, որոնք ճանաչվել են համաշխարհային գիտական հանրության կողմից:

2006 թ. սկսված բարեփոխումների առաջին փուլը պետք է նպաստեր գիտության զարգացմանը: Անհրաժեշտ էր ունեցած մարդկային, նյութական և մնացյալ ռեսուրսները կենտրոնացնել գիտական այն ուղղությունների շուրջը, որոնք ունեին ավանդույթներ, ապահովված էին կադրերով և ուրվագծված էին մոտ ապագայում կատարվելիք աշխատանքները: Այս առումով կարևորվում էր գիտության գերակա ուղղությունների հաստատումը, որոնք պետք է դառնային պարտադիր բոլոր գիտատեխնիկական կառույցների համար: Միաժամանակ, կարևորագույն ուղղությունների ընտրության հարցում, ինչպես, օրինակ, հայագիտության դեպքում, անհրաժեշտ էր հաշվի առնել Հայաստանի Հանրապետությանը վերապահված դերակատարումը՝ որպես աշխարհում գիտության այդ ուղղության լիարժեք զարգացման եզակի ու հիմնական օջախի:

Բարեփոխումների կարևոր մասը համակարգի օպտիմալացումն էր, որի նպատակը մանր, ոչ արդյունավետ գործող փոքր ստորաբաժանումներից ազատվելն է, որոնք ժամանակին ստեղծվել էին ոչ թե գիտական անհրաժեշտությունից, այլ բնույթի հիմնավորումներով: Արդյունքում, նախկինում առանձին-առանձին գործող 18 գիտական կազմակերպությունների հենքի վրա կազմակերպվեցին երեք գիտական կենտրոն և երեք ինստիտուտ ընդլայնված ուղղություններով:

Հասարակության զարգացման գործընթացում գիտության, որպես առաջընթացի հիմնական գործոնի դերը բարձրացնելու նպատակով պետք է վերանայվեն գիտական կազմակերպությունների, պետության և հասարակության փոխհարաբերությունները: Անկախության տարիների ընթացքում ոչ միայն գիտության վարկի խիստ անկում է նկատվում, այլև հանրային գիտակցության մեջ համառորեն ներդրվում է այն տեսակետը, թե Հայաստանում գիտական հետազոտությունները արդյունավետ են, չափից անց մեծ են, որ պետությունն իզոլու չէ պահել և զարգացնել այն:

ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների իրավական կարգավիճակը, նորարարական ու գիտական արդյունքների առևտրայնացման հետ կապված արդիական պահանջների իրականացումը հակասության մեջ էին հայտնվել ավելի ուշ ընդունված ,Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների, ինչպես նաև այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ:

Գիտության ոլորտի առջև ծառացած առաջնահերթ խնդիրներից է գիտական կադրերի երիտասարդացման հարցը: Չնայած պետական տարբեր մակարդակներում ընդունված որոշումներին ու ծրագրերին՝ երիտասարդ կադրերի համար գիտությունը այնուամենայնիվ, մնում է պակաս գրավիչ, շարունակվում է երիտասարդ կադրերի արտահոսքը գիտությունից այլ ոլորտներ, նաև արտերկիր: ԳԱԱ բաժանմունքների և ինստիտուտների գործունեության հիմնական ուղղություններից մեկը երիտասարդ կադրերով հետազոտական աշխատանքների ապահովվածությունն է: Վերականգնվել է ԳԱԱ երիտասարդ մասնագետների խորհուրդը, որն ակտիվ գործունեությամբ հասել է որոշակի հաջողությունների: Երիտասարդ գիտնականների մասնակցությամբ անց են կացվում բազմաթիվ գիտաժողովներ, հանդիպումներ, այլ միջոցառումներ և՛ Հայաստանում, և՛ արտերկրում: Լուծվել է երիտասարդ գիտնականների որոշ սոցիալական պրոբլեմներ: Մասնակիորեն լուծվել է երիտասարդների բնակարանային հարցը: Վերջերս նրանց համար շահագործման է հանձնվել 200 բնակարան բնակելի շենքեր: Տարաբնույթ միջոցառումների շնորհիվ աճել է երիտասարդ կադրերի թիվը հետազոտական աշխատանքներում, այժմ այն

# ՀՀ ԳԱՎ-Ե ՊԱՏՐԱՍՏ Է ՔԱՅԼԵԼ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ



➤ 3 կազմում է ընդհանուր թվի 25-30 %-ը :

Համակարգի հիմնական կադրային պոտենցիալը ձևավորվում է բուհերի և ԳԱՎ-ի ուսումնագիտական կենտրոնի շրջանավարտների հաշվին: Ակադեմիան, որպես շահագրգիռ կողմ, ակտիվ համագործակցում է հանրապետության առաջատար բուհերի հետ: Կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ, որոնք իրականացվում են համատեղ ստեղծված գիտական և ուսումնական կառույցների օգնությամբ:

Գիտության և կրթության ինտեգրման ուղիստում նոր ենթակառուցվածքների ձևավորումը դարձել է անհրաժեշտություն՝ կապված տնտեսական համակարգի ձևավորման, գիտության և տեխնիկայի բնագավառում պետության դերի բարձրացման և բարձրագույն կրթության վերակառուցման հետ:

Վերջին տարիներին էապես բարելավվել է միջազգային գիտակրթական կենտրոնի գործունեությունը: Կենտրոնը, որպես կրթական հաստատություն, բարձր վարկանիշ ունի ոչ միայն հանրապետությունում, այլև ողջ տարածաշրջանում, որտեղ ուսանել են ցանկանում դիմորդներ տարածաշրջանի երկրներից: Կենտրոնը ուսուցումը իրականացնում է ասպիրանտական և մագիստրոսական ծրագրերով: Մագիստրոսական ուսուցումն իրականացվում է համապատասխան մասնագիտությամբ հետազոտական ինստիտուտներում, որը ապահովում է ուսուցման գիտական բաղադրիչը: Կենտրոնի՝ թեմատիկ և բազային ֆինանսավորմամբ գիտական հետազոտությունների արդյունքները տպագրվում են հեղինակավոր միջազգային ամսագրերում: Այն իր ուսումնական և գիտական ծրագրերով կարող է դառնալ հետազոտական համալսարան:

ՀՀ ԳԱՎ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու ակադեմիայի գիտնականների առավել ակտիվ մասնակցությամբ միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: Վերջին տարիների ընթացքում մեծապես ակտիվացել է ակադեմիայի միջազգային համագործակցությունը: Նոր պայմանագրեր են ստորագրվել Ռուսաստանի Դաշնության, Էիտվայի, Ռումինիայի, Զինաստանի հասարակական գիտությունների, Հնդկաստանի գիտությունների ակադեմիաների հետ: Երկարատև համագործակցության արդյունքում համատեղ գիտական կառույցներ են ստեղծվել ֆրանսիական մի քանի համալսարանների և մեր՝ Ֆիզիկական հետազոտությունների, Երկրաբանական, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների հետ: Վերջին տարիներին ՀՀ ԳԱՎ ինստիտուտները իրականացրել են 70-80 մեծ ու փոքր դրամաշնորհային ծրագիր: Դրամաշնորհները ոչ միայն բարելավում են կառույցի ֆինանսական վիճակը, այլև անմիջական կապ հաստատում գիտնականների միջև, նպաստում մեր գիտության՝ համաշխարհային գիտական գործընթացներին ինտեգրմանը:

Խիստ կարևորելով մայր հայրենիքի և սփյուռքահայ գիտնականների հզոր ներուժի համախմբումը, հայ գիտական միտքը Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտության և տնտեսության զարգացման ուղղորդելը, դրանով իսկ խթանելով հայ գիտնականների համագործակցությունն ամբողջ աշխարհում՝ ԳԱՎ-ն 2007 թ. որոշում ընդունվելով՝ ստեղծել ԳԱՎ սփյուռքի բաժին, որը պետք է իրականացներ սփյուռքահայ գիտնականներին ԳԱՎ արտասահմանյան անդամներ ընտրելու կազմակերպական և ապագա համագործակցության աշխատանքներ վարելու գործընթացը: Սփյուռքի բաժինը կողորդիմացնում է անմիջական կապ է հաստատում ԳԱՎ նախագահության և ԳԱՎ հայազգի արտասահմանյան անդամների, համակարգի ինստիտուտների և առանձին գիտաշխատողների միջև, հետևում է բոլոր պայմանավորվածությունների կատարմանը:

2018թվականի սկզբին ՀՀ ԳԱՎ արտասահմանյան անդամներ են ընտրվել 135 հայազգի հանրահայտ գիտնականներ 23 երկրներից: Սփյուռքահայ գիտնականների հետ մեր գիտնականների համագործակցությունը բազմազան է ու բազմաբնույթ: Նրանց օգնությամբ իրականացվում է երիտասարդ կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, մեր գիտնականների մասնակցությունը միջազգային գիտական, գիտակրթական ծրագրերին, կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ, արդյունքները տպագրվում են հեղինակավոր միջազգային գիտական հանդեսներում:

Նախագահության կազմում ստեղծվել է միջազգային դրամաշնորհների և ծրագրերի բաժին, որը համակարգում և տեղեկատվություն է տարածում, աշխատանքներ է տանում մեր հետազոտողներին եվրոպական ծրագրերում ներառելու համար, դրամաշնորհների մասին համապատասխան հայտեր կազմում:

ՀՀ ԳԱՎ կարևոր խնդիրներից է գիտատեխնիկական առաջընթացի և սկզբունքորեն նոր ուղիների բացահայտումը, մասնակցությունը հայրենական և համաշխարհային գիտության նվաճումների գործնական, կիրառական առաջարկությունների մշակմանը: Այդ խնդիրը լուծելու համար ՀՀ ԳԱՎ համակարգի գիտական ինստիտուտները կարևորելով պետության տնտեսական և սոցիալական կարիքներին նպաստումը և գիտելիքի հիմքի վրա կառուցվող տնտեսության մեջ ներդրումների կատարումը առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարության:

Այդ բնույթի աշխատանքների համակարգումը իրականացնելու նպատակով, նախագահության կազմում 2018 թվականին ստեղծվել է առանձին կառույց: Նոր բաժնի հիմնական խնդիրը ՀՀ ԳԱՎ համակարգում ստացված կիրառական բնույթի գիտատեխնիկական արդյունքների ներկայացումն է հանրապետական և միջազգային շահագրգիռ կազմակերպություններին: Համաշխարհային ընկերակցության զարգացման

նոր միտումները կապվում են տարբեր երկրների միջև համագործակցության ընդլայնման հետ և ուղղված են մարդկության առջև ծառացած գլոբալ խնդիրների լուծմանը: Գիտության զարգացման նոր ռազմավարությունը առաջնությունը տալիս է այնպիսի հետազոտություններին, որոնք արժեքավորում են համաշխարհային ընկերակցության գոյությունը նրա կայուն և անվտանգ զարգացման հեռանկարը:

Նշված խնդիրները լուծելու, ԳԱՎ համակարգի առկա վիճակի վերլուծության անցկացման, ինչպես նաև ունեցած ձեռքբերումները պահպանելու և զարգացնելու համար ԳԱՎ նախագահության որոշմամբ 2017թ. Իրականացվել է համակարգի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատումը:

Արդյունավետության գնահատման նպատակը ԳԱՎ համակարգում բարեփոխումների և կառավարման իրատեսական որոշումների մշակման և կայացման համար հիմնավորումների ձևավորումն է, հետևյալ թիրախային ուղղություններով.

- բարձրացնել գիտական ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ ավելացնելով ԳԱՎ ներդրումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում,
- ավելացնել համաշխարհային գիտության մեջ ԳԱՎ գիտական կազմակերպությունների ներդրումը և ապահովել նրանց մրցունակությունը հետազոտությունների ու մշակումների համապատասխան ուղղություններով,

- բարձրացնել ԳԱՎ դերն ու հեղինակությունը հասարակության շրջանում,

- նպաստել ԳԱՎ ամբողջական ու արդյունավետ համակարգի ձևավորումը:

ԳԱՎ յուրաքանչյուր գիտական կազմակերպության գործունեության գնահատման արդյունքների որակական ու քանակական վերլուծությունների ուսումնասիրությունը նախ հիմնավորում է համապատասխան թիրախային ուղղություններով բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, երկրորդը դրա հիման վրա ձևակերպվել են մի շարք խնդիրներ և մշակվել են բարեփոխումների իրականացման միջոցառումների ծրագրեր վերը նշված թիրախային ուղղություններով:

ԳԱՎ-ում արդեն իսկ իրականացվող բարեփոխումների ծրագրերում ներառված են բազմաթիվ միջոցառումներ ինչպիսիք են՝ ներքին կառուցվածքային բարեփոխումները և օպտիմալացումը, գիտական ուղղությունների և թեմաների արդիականացումը, լաբորատոր սարքերի և տեխնիկական միջոցառումների ձեռքբերումը, կիրառական ուղղվածության ախատանքների և գիտական արդյունքների առևտրայնացման ավելացումը, միջազգային գիտատեխնիկական համագործակցության էլ ավելի ընդլայնումը, երիտասարդ մասնագետներին աջակցումը, գիտության և կրթության ինտեգրման խորացումը և բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստումը և այլն:

Պետք է նշել, որ ԳԱՎ կադրային ներուժը ունակ է նաև գիտականորեն հետազոտելու և լուծումներ առաջարկելու հանրապետության տնտեսության և ռազմական արդյունաբերության առջև ծառացած շատ-շատ խնդիրների ուղղությամբ, եթե այդպիսի պատվերներ տրվեն:

Իր գոյության 75 տարիների ընթացքում ակադեմիան կուտակել է գիտագործնական իսկայական փորձ, արժանացել է միջազգային գիտական հանրության բարձր գնահատականին, վայելում է հարգանք և հեղինակություն: Ակադեմիայի համակարգում ձևավորվել են բազմաթիվ գիտական դպրոցներ, որոնք միշտ էլ պատվով են ներկայացրել Հայաստանը միջազգային ասպարեզում: Ակադեմիայի համակարգի բազմաթիվ գիտական կազմակերպություններ մշտապես գիտական իրենց ձեռքբերումները անհատույց ծառայացրել են պետությանն ու ժողովրդին:

Հատկապես մեծ է ակադեմիայի համակարգող դերը հայագիտության, հասարակական այլ հիմնարար ու կիրառական, բնական գիտությունների բնագավառում:

Այսօր էլ ակադեմիան իր կազմակերպություններով հանդերձ, գիտական մեծ ուժ է, ճիշտ կազմակերպման և օգտագործման դեպքում այն կարող է էապես նպաստել Հայաստանի Հանրապետության կայուն զարգացմանը պետության և հասարակության բոլոր բնագավառներում:



# ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց ԱՊՀ գիտնականների II Ֆորումը

Սույն թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց ԱՊՀ գիտնականների II Ֆորումը: Ողջունելով Ֆորումի մասնակիցներին, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ասաց, «Հույսով եմ, որ Ֆորումի ընթացքում մենք կհասնենք այն նպատակներին, որոնք նախանշել ենք՝ Հայաստանում Ֆորումի անցկացման վերաբերյալ որոշում ընդունելիս: Ռադիկ Մարտիրոսյանը կարևորեց ԱՊՀ երկրներում գիտական հետազոտությունների կազմակերպչական ձևերի փոփոխությունները և այդ փոփոխությունների արտացոլումը գիտության զարգացման գործում:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը իր ողջունի ելույթում մասնավորապես ասաց. «Առանձնահատուկ գոհունակությամբ ցանկանում եմ նշել, որ մեր համրապետությունում ժողովրդավարական արժեհամակարգի, մեր քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում անգնահատելի է կրթության և գիտության դերը, որը մեծապես նպաստում է երկրի զարգացմանը: Հարգելի գործընկերներ, այս համաժողովի հիմնական նպատակն է զարգացնել ԱՊՀ երկրների գիտական հաստատությունների գիտատեխնիկական համագործակցությունը, խթանել համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, մշակել առաջարկություններ ԱՊՀ երկրների ինովացիոն քաղաքականության զարգացման համար, ինչպես նաև նպաստել ԱՊՀ երկրների երիտասարդության շրջանում գիտության տարածմանը և փորձի փոխանակմանը: Լիաժույս եմ, որ ԱՊՀ գիտնականների II համաժողովի ընթացքում ԱՊՀ երկրների գիտական համայնքների ներկայացուցիչների միջև կհաստատվի կայուն համագործակցություն, ինչը կնպաստի միջազգային գիտական հետազոտությունների քանակի ավելացմանը և տարածաշրջանում երիտասարդ



գիտնականների համագործակցության խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների համակարգումանը:

ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Ազիբայ Սմագուլովը իր ելույթում համաժողովի մասնակիցներին հյուրընկալող Հայաստանին ցանկացավ զարգացում և բարգավաճում տեղեկատվական և ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ:

Համաժողովի պլենար նիստի ընթացքում ԱՊՀ պետությունների գիտնականները համոզեց եկան ԱՊՀ-ում գիտության զարգացման հարցերի վերաբերյալ ելույթներով:

լույթներով:

Ֆորումի շրջանակներում հոկտեմբերի 16-ին կազմակերպվեցին կլոր սեղաններ՝ «Հիմնարար գիտության վիճակը և զարգացման հեռանկարները», «Գիտական համագործակցության կատարելագործումը թվային դարաշրջանում», «Ինովացիոն գիտական հետազոտությունները» թեմաներով:

Միջոցառման ավարտին Ֆորումը ընդունեց հռչակագիր:

ԱՊՀ գիտնականների II Ֆորումն անց է կացվում ԱՊՀ երկրների՝ հումանիտար ոլորտում համագործակցության 2017-2018թթ. պլանի համաձայն:

Ֆորումի կազմակերպիչներն են՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի հետ համագործակցությամբ և ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Ֆորումի անցկացմանն աջակցել են ՀՀ-արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհուրդը, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, Հայ-ռուսական համալսարանը:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

## Ֆրանսիան աջակցում է Հայաստանի թվայնացման գործընթացին

Սույն թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Ֆրանսիայի թուլուզի դաշնային, Պոլ Սաբատիեի անվան թուլուզ III համալսարաններն ու թուլուզի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտը համաձայնության արձանագրություն ստորագրեցին Ֆրանսիական ԲՈՒՀ-երի կողմից ՀՀ ԳԱԱ-ին նվիրաբերվող Գերհամակարգչի վերաբերյալ:

Արձանագրությունը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, թուլուզի դաշնային համալսարանի նախագահ Ֆիլիպ Ռենթոն, Պոլ Սաբատիեի անվան թուլուզ III համալսարանի նախագահ Ժան Պիեռ Վինելը, թուլուզի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտի նախագահ Օլիվիե Սիմոնենը Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

«Մենք ցանկացանք մեր բաժին մասնակցությունն ունենալ բացառիկ այն պահերին, որն այսօր ապրում է Հայաստանը՝ Ֆրանկոֆոնիայի գազաթափողովի այս ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետությունում գերարագ ճշգրիտ հաշվողական կենտրոնի հիմնադրմանն ուղղված փաստաթղթի ստորագրմամբ: Այս արձանագրությունը գալիս է իր բաժին ամրապնդումն ու հզորացումը բերելու այն համագործակցության փաստաթղթին, որը ստորագրվել է թուլուզի ԲՈՒՀ-ական հաստատությունների և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միջև: Նմանատիպ արձանագրության ստորագրությամբ կարելի է փուլանշել երկարամյա համագործակցություն, որը ցանկանում է Հայաստանը վարել Ֆրանսիայի հետ այնպիսի ուղղություններում, ինչպիսիք են՝ բարձր ճշգրտությամբ հաշվարկներ, մեծածավալ տվյալների հավաքագրում և վերլուծություն և արհեստական ինտելեկտ: Շնորհիվ թուլուզյան համալսարանական միջավայրի այս նախաձեռնության՝ Ֆրանսիան կարող է իր բաժին մասնակցությունը ցուցաբերել Հայաստանում մեկ այլ հեղափոխական դրսևորման, որն է թվայնացմանը միտված հեղափոխությանը», - իր ողջունի ելույթում ասաց Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ժոնաթան Լաքոտը:

«Այսօր մեր Գիտությունների ազգային ակադեմիայի համար, մեր գիտական հանրության համար պատմական օր է, որովհետև մենք լրացնում ենք մեր համագործակցության պատմության մի նոր էջ: Վերջին 15 տարիների ընթացքում թուլուզի տարածաշրջանի համալսարանների և Գիտությունների ազգային ակադեմիայի մի քանի ինստիտուտների միջև ստեղծվել է ջերմ համագործակցություն: Այդ համագործակցության արդյունքներից են՝ բարձր որակավորման կադրերի պատրաստումը, գիտական ծրագրերի մշակումը և այն ծրագրերը, որոնք նախատեսվում են առաջիկայում: Այս արարողությունը կատարվում է երկու շատ կարևոր միջոցառումների ժամանակահատվածում, մեկը՝ Ֆրանկոֆոնիայի համաժողովը է, տնտեսական համագործակցության համաժողովը, և ընդամենը մեկ շաբաթ հետո մենք նշելու ենք Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյա հոբելյանը: Մեր գործընկեր համալսարանների կողմից, Ֆրանսիայի կառավարության կողմից ակադեմիայի ծննդյան օրվա նախօրեին նվիրվում է շատ կարևոր գերհամակարգիչ, որը մենք մինչև հիմա չունեինք, բայց ցանկանում էինք ունենալ: Այդ գերհամակարգիչը կօգտագործվի Հայաստանի հիմնարար գիտության տարբեր բնագավառներում և կնպաստի մեր գիտական արդյունքների ներդրմանը երկրի տնտեսության մեջ: Թուլուզ տվեք մեր խորին շնորհակալությունը հայտնել Ֆրանսիայի դեսպլարին, Ֆրանսիական համալսարաններին, Ֆրանսիայի դեսպանատանը, դեսպանին, դեսպանատան բոլոր աշխատակիցներին», - իր ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:



սարանների և Գիտությունների ազգային ակադեմիայի մի քանի ինստիտուտների միջև ստեղծվել է ջերմ համագործակցություն: Այդ համագործակցության արդյունքներից են՝ բարձր որակավորման կադրերի պատրաստումը, գիտական ծրագրերի մշակումը և այն ծրագրերը, որոնք նախատեսվում են առաջիկայում: Այս արարողությունը կատարվում է երկու շատ կարևոր միջոցառումների ժամանակահատվածում, մեկը՝ Ֆրանկոֆոնիայի համաժողովը է, տնտեսական համագործակցության համաժողովը, և ընդամենը մեկ շաբաթ հետո մենք նշելու ենք Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյա հոբելյանը: Մեր գործընկեր համալսարանների կողմից, Ֆրանսիայի կառավարության կողմից ակադեմիայի ծննդյան օրվա նախօրեին նվիրվում է շատ կարևոր գերհամակարգիչ, որը մենք մինչև հիմա չունեինք, բայց ցանկանում էինք ունենալ: Այդ գերհամակարգիչը կօգտագործվի Հայաստանի հիմնարար գիտության տարբեր բնագավառներում և կնպաստի մեր գիտական արդյունքների ներդրմանը երկրի տնտեսության մեջ: Թուլուզ տվեք մեր խորին շնորհակալությունը հայտնել Ֆրանսիայի դեսպլարին, Ֆրանսիական համալսարաններին, Ֆրանսիայի դեսպանատանը, դեսպանին, դեսպանատան բոլոր աշխատակիցներին», - իր ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Թուլուզի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտի նախագահ Օլիվիե Սիմոնենը իր խոսքում նշեց, որ, գերհզոր համակարգիչը նվիրաբերվելով, փորձում են գիտական զարգացման նոր տեսլական ու նոր հորիզոն բացել Հայաստանի ապագայի համար: Ինֆորմատիկայի և համացանցի հիմնադիրներից Լուի Պուլեզեն էլ հույս հայտնեց, որ մի քանի տարի հետո Երևանը կլինի գերապահով տվյալների գծով մասնագետների պատրաստման արժանավոր, հավաստի քաղաք:

Ստորագրված արձանագրության նպատակներով նախատեսվում են համագործակցային հետևյալ գործողությունները.

- ստեղծել Հայաստանի Հանրապետությունում Բարձր արտադրողականությամբ հաշվարկների կենտրոն

- մասնակցել ազգային թվային հարթակի զարգացման աշխատանքներին երաշտի սեզոնային թվային կառավարման նպատակով

- հնարավորություն ստեղծել հայ օգտագործողների համար՝ օգտվելու թուլուզի համալսարանների զանազան հաստատությունների՝ բարձր արտադրողականությամբ հաշվարկների փորձից

- աջակցել հայկական խմբերին՝ պատրաստելու մասնագետներ Բարձր արտադրողականության, Մետատվյալների և Արհեստական Բանականության ուղղություններով:

Գերհամակարգչային համակարգերը ձեռնարկությունների, գիտահետազոտողների և պետական ??գերատեսչությունների կարողությունների ընդլայնման կարևոր միջավայր են, որոնք նոր ՏՀՏ ծառայությունների և արտադրանքների օգնությամբ խթանում են նորմոնությունները և հայտնագործությունները: Գերհամակարգիչները զգալիորեն նպաստում են գիտական առաջընթացին, արդյունաբերական մրցունակությանը, ազգային անվտանգությանը և կյանքի որակի բարելավմանը:

Հայաստանում ազգային գերհամակարգչային կենտրոնի հիմնումը թույլ կտա փորձնական, ոչ արհեստավարժ, անվտանգությունը չապահովված համակարգերից անցնել ժամանակակից գերհամակարգչային համակարգերի, ինչպես նաև կիթանի ՏՀՏ ոլորտում ինովացիոն առաջընթացին և կնպաստի Հայաստանի գիտատեխնիկական ներուժի զարգացմանը: Հետազոտական միջավայրերը և արհեստավարժ ծառայությունները Հայաստանում մեծ ազդեցություն կունենան տնտեսության, բժշկության, գիտության, կրթության, մշակութային և այլ ոլորտներում:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

## ՎԻԼՅԱՄ ՍԱՐԴՅԱՆԻ 110 - ԱՄՅԱԿԸ



աշխարհի սարսափներից ու ամոթից... Եվ քանի ապրում ես... ոչ մի բան չավելացնես աշխարհի աղետներին ու տխրությանը, այլ ժպտա կեցության անծայր խնդության ու գաղտնիքի հանդեպ»:

Սարոյանական բարության մասին շատ է գրվել ու խոսվել:

Հիրավի, նրա ստեղծագործությունները թաթախված են անհուն մի բարության: Եվ բարության այդ գործող տարրերը հաճախ թյուրիմացության մեջ է գցել քննադատներին, մեկ անգամ չէ, որ նրանք գրել են ու պնդել, թե իբր Սարոյանն իր այդ բարությամբ չարին չհակառակվելու քրիստոնեական բարոյախոս է, թե նա ուզում է կյանքից մերժված ու հասարակ մարդկանց հաշտեցնել դաժան իրականության հետ, թե սփոփելով նրանց, զինաթափում է և այլն, և այլն:

Ճշմարտության բաժինը շատ չնչին է այդ դատողություններում: Չարն ու բարին Սարոյանի ստեղծագործություններում զուգահեռ չեն ընթանում, դրանք մշտական պայքարի մեջ են: Եվ Սարոյանն ամենևին էլ չարին չհակառակվելու քրիստոնեական միամիտ բարոյախոս չէ,

- եղավ, որ խեղճացա... Պատերազմի ատեն էր: Երեսուներեք օրեն «Վեսլի Ջեկոսնի արկածները» գրեցի ու խեղճացա: 72 ժամ խենթ եղա, խենթություն եկավ վրաս... Մարդ չիմացավ: Ես ու իմ Աստված կռվեցանք, կռվեցանք, ու ես հաղթեցի... Ո՛չ, իմ Աստված հաղթեց, իմ Աստված ես եմ: Ամենամեծ խայտառակություն, ամենամեծ չարիք պատերազմն է... Այդ ինչ խայտառակություն ըրին, ժողովուրդ ջնջխեցին: Սարսափեր էի աշխարհի դեմ: Պատերազմեն վերջ տարի մը տող մը իսկ չկրցա գրել: Հետո այդ խենթություն, այդ մեկամաղծոտություն օգտակար եղավ ինձի, շատ բան հասկցա...

Թուրքական անընդմեջ հալածանքներից ու ջարդերից փախած և օտար հողում ապաստան գտած հայ տարագիր ծնողների զավակը երևի ամբողջ խորությամբ հասկացավ, թե ժողովուրդներին ինչ է բերում կույր ֆանատիզմը, ինչ է բերում իրեն ուրիշից գերադասելու կույր մոլորությունը, ֆաշիզմի ջախջախումով երևի առավել ամրապնդեց իր այն հավատը, որ «սերը անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան»:

Քայլելով աշխարհի, իր խոսքերով ասած, «չարութ-

ՎԱՐԱԳՆ ԴԱԿԹՅԱՆ

# «ՈՒՐ ՈՐ ԿԵՐԹ-ԱՍ, ԴՈՌ-Ա ՀԱՅԱՍՏԱՆ»

(Սկիզբը նախորդ համարում)

Եվ այստեղ ուզում եմ մի խոստովանություն անել. մոտավորապես ծանոթ էի կենսագրությանը, գիտեի, որ կանոնավոր կրթություն չի ստացել, միջնակարգը չավարտած դեմ է նետել դպրոցական պայուսակը, գնացել է փողոց թերթ վաճառելու, հետո հեռագրատանն է աշխատել, հեռագրեր է բաժանել... Մեր առաջին երկու հանդիպումներն էլ, Փարիզում ու Ֆրեզնոյում, շատ թռուցիկ էին, մեր զրույցները հապճեպ ու կցկտուր, և այն տպավորությունն էի ստացել, թե նա սոսկ բնատուր տաղանդ է, մեծ տաղանդ, Աստուծո մատն ունի ճակատին և գրում է միայն վերուստ տրված շնորհով: Բայց ահա, երբ նա եկավ Հայաստան, ու ես մոտիկից հաղորդվեցի նրան, իմ պատկերացումները լիովին փոխվեցին: Խորապես զգացի ու հասկացա, որ նա, բնատուր մեծ տաղանդ լինելով հանդերձ, նաև մեր ժամանակի ամենագարգացած, ամենաբարձր մտավորականներից է, որ նա, ինչպես ասում են, մաղից է անցկացրել աշխարհի բոլոր հին ու նոր փիլիսոփայական սիստեմաները, քաջատեղյակ է աշխարհի հին ու նոր գրական ուղղություններին, դպրոցներին ու տեսություններին, հիմնալի գիտե ռուս գրականությունը, մասնագետի հմտությամբ կարող է խոսել կերպարվեստի, երաժշտության ու թատրոնի մասին, իրեն քաղաքականությունից հեռու մարդ համարելով, նրբագույն քաղաքագետ է նաև: Մի խոսքով՝ աշխարհի ամբողջ հին ու նոր քաղաքակրթությունը ներծծած ու մարսած բարձրագույն մտավորական, իր ժամանակի արվեստի ու գրականության շատ ու շատ մեծերի հետ սեղան մատած, մտքեր փոխանակած, հաճախ նաև բուռն վեճերի մեջ մտած մտավորական:

Եվ ահա այդ երկուսի՝ մեր ազգային ոգու, ոճի, հոգեբանության, ավանդների և միջազգային գեղարվեստական մտածողության համաձուլվածքից ծնունդ է առել գրական վիթխարի մի երևույթ, որ մեկ բառով սարոյանական է կոչվում:

Սարոյանը այն քիչ գրողների թվին է պատկանում, որոնք մի առավոտ արթնանում են նշանավոր դարձած:

Սարոյանի պատմվածքների առաջին ժողովածուն իսկական հայտնություն եղավ ամերիկյան գրականության համար: Երիտասարդ հեղինակի անունը իսկական տարածվեց, նրա պատմվածքներն ու պիեսները լայն ճանաչում գտան: Ամերիկյան գրական քննադատությունը նրան դրեց ժամանակի խոշոր գրողների կողքին:

Ի՞նչն էր այդ մեծ հաջողության գաղտնիքը:

Իմաստուն, թախծալի ու հեգնական հայ պոեզիայի թանձր բուրմունքով հագեցած սարոյանական ստեղծագործությունը ի՞նչ էր ասում ամերիկացիներին ու աշխարհին: Եթե փորձենք ամենակարճ պատասխանը տալ այդ հարցին, ապա ստիպված ենք դիմել հենց իրեն՝ Սարոյանին, որն աշխատելով բացատրել, թե ո՞րն է «Իմ սիրտը լեռներում է» պիեսի իմաստն ու բարոյախոսությունը, գրել է. «Դա հասարակ ու հին է, ինչպես աշխարհը՝ ավելի լավ է լինել բարի, քան լինել չար»: Գիշտ է, դա միայն մի պիեսի մասին է ասված, բայց վերաբերում է նրա ամբողջ ստեղծագործությանը:

Իսկ եթե փորձենք մի փոքր ավելի ընդարձակ պատասխանել այդ հարցին, ապա դարձյալ ստիպված ենք դիմել Սարոյանին, քանի որ ինքներս հազիվ թե կարողանանք գտնել ավելի դիպուկ ու ավելի սպառնիչ պատասխան. «Փնտրիր բարին ամենուրեք, և թող նա լինի ազատ և աներկյուղ... Արթնացրու առաքինությունը, ում սրտում էլ որ նա գաղտնի ու տրտուն թաքնվելիս լինի



այստեղ ևս նա հայ ժողովրդի կենսափիլիսոփայության, նրա էպոսի գաղափարների հարազատ ժառանգորդն է: «Մի ամաչեք լինել բարի ու քնքուշ,- գրում է Սարոյանը իր զուլխագործոցներից մեկի՝ «Չեր կյանքի ժամանակը» պիեսի նախաբանում,- բայց եթե երբևիցե ձեր կյանքի ճանապարհին սպանելու հերթը կգա, սպանեցեք և մի զղջացեք»: Եվ հենց այդպես էլ կատարվում է այդ պիեսում, բարու ճանապարհին կանգնում է չարը՝ ոստիկան Բիլի տեսքով: Ու երբ բարության խոսքն անգոր է դառնում նրա դեմ, փայլատակում է հատուցման դաշույնը, ճիշտ այսպես, ինչպես մեր հիմնավորը Էպոսում:

Սարոյանի «Կոտորածն մանկանց» պիեսի գործող անձերից մեկը՝ Արչին, քննելով մարդկային դժբախտության պատճառները, աշխատելով հասկանալ, թե չարն ինչո՞ւ է կարողանում հաղթանակ տանել բարու նկատմամբ, ինչո՞ւ են բարի մարդիկ այդքան անզոր ու անպաշտպան, ասում է. «Եթե նրանք տուն ունենային, եթե նրանք ունենային հայրեր ու մայրեր, նրանք իրենց կյանքն այդպես չէին ավարտի, նրանց չէին սպանի ահա այսպես, առանց որևէ պատճառի»:

Մի անգամ զրույցի ժամանակ Սարոյանն ինձ հարցրեց.

- Գիտե՞ս, Քրիստոս ինչու դժբախտ էր Չե՞ս խորհած այդ մասին... Ես խորհած եմ: Դժբախտ էր, որովհետև ընտանիք չուներ:

Ես տողեր եմ հիշում նաև «Վեսլի Ջեկոսնի արկածները» վեպից, ուր համաշխարհային երկրորդ պատերազմի սարսափներն են ու արհավիրքները: Վեսլի հերոսը, այդ արհավիրքներից զարհուրած, ասում է. «Ես ծնվել ու մեծացել եմ ընտանիքում, հասկանո՞ւմ ես, ընտանիքում: Մենք սիրուց բացի ոչինչ չգիտեինք: Ես ուզում եմ ապրել ընտանիքում և ոչ բանակում... Ամեն ոք պիտի ընտանիք ունենա»:

Ընտանիք, փոխադարձ սեր ու ընթերցողություն... Դարձյալ հայկական կենսափիլիսոփայությունից եկող ճշմարտություն, որ Սարոյանը հակադրում է ժամանակակից աշխարհի տարանջատվածությանը, մարդու միայնությունը:

Ընտանիք, տոհմ, ազգ, ժողովուրդներ, մարդկություն...

Նրանց կապը, փոխադարձ սերը, համերաշխությունը, բարեկամությունը ամենաբարձր ու գեղեցիկ արժանիքներն են Սարոյանի համար, չարին դիմադարձ լինելու ամենագործող միջոցները:

Ժողովուրդների, նրանց բարեկամության նկատմամբ հարգանքը, սերն ու ակնածանքը նրա էությունն է, մարդկային, ստեղծագործական էությունը: Նա ռիսերինն է թշնամության, ռիսերինը՝ պատերազմի:

Մի առիթով պատմեց.

յան ու ազահության, ատելության ու սարսափի, արատավորության ու նեխվածության միջով, նա երկի սկսեց ավելի ու ավելի խոր գգալ իր ակունքների կարողությունը: Նախ կրկին այցելեց Սովետական Հայաստան, ապա գնաց Բիթլիս, իր ծնողների ու նախնիների բնօրրանը: Հազմանքով էր պատմում այդ մասին. «Քաղաք ավերակ էր, միայն բերդ կանգուն էր:

Քուրդ մը կար, ութսունն անց, հորս հիշեց, ճանչցավ: Ան էր, որ ինձի մեր տան տեղ ցուցուց:

Տուն ավերակ էր, բայց օջախ կար...

Հետո մարդիկ կային, քուրդեր, թուրքեր, ըսի դուք գացեք, կուզեմ մենակ մնալ»:

Ու մենակ է մնացել հայրենի տան ավերակների մեջ: Ինչքա՞ն է մնացել, ի՞նչ է խորհել ի՞նչ է զգացել...

Ինչ իմանաս...

Հայրենի ավերակված տունը...

Այդ տան քարե պատերի մեջ դարեր շարունակ ապրած խղճի, բարության, առաքինության, կեցության պարզ ու բարդ փիլիսոփայության ժառանգորդն էր նա: Ու թեև ավերակ էր տունը, բայց այդ տան մեջ ապրած կեցության պարզ ու բարդ փիլիսոփայությունը, տեղափոխվելով Սարոյանի պատմվածքների, վեպերի, պիեսների մեջ, մնացել է անվաք, անխաբար և փոխարկվել մի մեծ համանվագի... Այդ համանվագի մեջ պղնձե փողեր են դողանջում, որ ասես անվերջ կրկնում են. «Իմ սիրտը լեռներում է»... Բարության ծայրը, գթության բարբառն ու ցավի շշուկը գալիս, միահյուսվում ու փոխվում են միմյանց այդ աշխարհում չլսված մի զարմանալի մեղեդու: Ծննդաներն այնտեղ հպարտորեն հնչեցնում են. «Ուր որ կերթաս, պոռա Հայաստան», իսկ ջութակները թավշե ձայնով կրկնում են. «Սերը անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան»:

Հետո Սարոյանը կրկին ու կրկին եկավ Հայաստան, այստեղ գշեց իր ծննդյան 70-ամյակը, նորից շրջեց դաշտերն ու հովիտները, մտավ կիրճերն ու ձորերը, շփվեց հազարավոր մարդկանց հետ՝ գյուղացիների ու գիտնականների, գրողների ու բանվորների, ուսանողների ու երեխաների, եղավ Լոռիում, Ջանգեզուրում, Շիրակում, երկի կենսական նոր մյուսեր կատակեց ու խոստացավ մոտիկ ապագայում նորից գալ...:

Խոստացավ... բայց 1981 թվի մայիսյան մի պայծառ օր եկավ նրա ամակնկալ մահվան բողոք և բոթի հետ՝ նրա վերջին ցանկությունը, կտակով վավերացված նրա նվիրական իղձը՝ իր աճյունի կեսը թաղել Հայաստանում...

Երբ առաջին անգամ Ամերիկա այցելեցի, եղա նրա ծննդավայր Ֆրեզնոյում ու մոտեցա նրա փոքրիկ առանձնատանը, ներսից կոմիտասյան նվագ լսեցի: Հետո նա ինձ բացատրեց, որ միշտ, երբ աշխատում է, կոմիտասյան նվագ է լսում, որովհետև այդ նվագից ինչ-որ խորհրդավոր ոգի է հաղորդվում իրեն:


Այժմ նա մեջում է Կոմիտասի կողքին:

Երբ վերջին անգամ եկավ Հայաստան, ասաց.

- Վարպետ Մարտիրոս Սարյան չիկա, Հրաչյա Ներսիսյան չիկա, Վարդան Աճեմյան չիկա... Ու շատ տխուր եմ:

Այժմ նա մեջում է վարպետ Մարտիրոս Սարյանի, Հրաչյա Ներսիսյանի, Աճեմյանի, հայոց մյուս մեծերի կողքին:

Եվ այնտեղ, Հրազդանի կիրճի եզերքին, գիշերային լռության մեջ շարունակվում է հայոց մեծերի հավիտենական ու լուռ զրույցը, որ աշխարհի ու մարդու, արդարության ու բարության մասին է, արվեստի հրաշքի մասին, հայ ժողովրդի խորհրդավոր ու հարատև ոգու մասին:



վերանվանվել է Բանահյուսության տեսության և պատմության բաժին: Արդեն 40 տարի է ինչ նա գործիմաց հմտությամբ ղեկավարում է այդ բաժնի աշխատանքները:

1992 թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն՝ մեծապես նպաստելով ինստիտուտի գիտակազմակերպչական աշխատանքներին:

Ս. Հարությունյանը հիմնարար գիտնական է: Նրա գիտական ողջ գործունեությունն ընթացել է մի շարք ուղղություններով, որոնք իրենց խոր հետքն են թողել հայագիտության պատմության մեջ:

Նախ՝ դա հայ ժողովրդական հանելուկների գիտական ոլորտն է՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» մենագրությամբ:

տության նահապետի հեղինակություն:

Իր գիտահետազոտական արգասավոր գործունեությանը զուգընթաց Ս. Հարությունյանը զբաղվել է նաև հայագիտական գիտելիքները ժողովրդական լայն զանգվածներին հասու դարձնելու պատվավոր գործով: 1970-80-ական թթ. նա հաջողությամբ ղեկավարել է հայկական հեռուստատեսությամբ պարբերաբար հեռարձակվող և ժողովրդականություն վայելող «Հայագիտական հանդես» հաղորդաշարը: Բացի այդ, նա ընթերցող լայն զանգվածների համար կազմել և հրատարակել է մի շարք հանրամատչելի գրքեր՝ նվիրված հայ հին վեպերին ու առասպելներին («Հայ հին վիպաշխարհը», 1987, 2004, ռուսերեն տարբերակը՝ «ՃՈՒԹ Ռ սպչավՊո ՊՐպՉվՌ ՈՐՎՂ», 2007), ինչպես նաև՝ հայ ասոյթաբանության

յուն» աշխատությունը արժանացել է Համազգային կրթամշակութային հաստատության մրցանակին (1999) և հրատարակվել Բեյրութում (2000), իսկ «Հայ հմայական և ժողովրդական աղոթքները» արժանացել է Թեքեյան մշակութային միության մրցանակին (2008):

Իր գիտահետազոտական աշխատանքներից բացի, Ս. Հարությունյանը տասնամյակներ շարունակ զբաղվել է նաև արդյունավետ գիտամանկավարժական գործունեությամբ: Ավելի քան 30 տարի նա Երևանի և Գավառի պետական, ինչպես նաև Հր. Աճառյանի անվան համալսարաններում դասավանդել է Հայ հին գրականություն, ժողովրդական բանահյուսություն, Հայ առասպելաբանություն առարկաները և 2010 թ. հրատարակել «Բանագիտական ակնարկներ» խո-

## ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՅԱԳԻՏ-ԱՐԵՎԵԼԱԳԻՏ ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆԸ (Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի ծննդյան 90-ամյակը:

Ս. Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին ներկայիս Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: 1940 թ. ընտանիքով տեղափոխվել է Թբիլիսի և ուսումը շարունակել տեղի թիվ 83-րդ, 89-րդ և 26-րդ արական միջնակարգ դպրոցներում: Վերջինիս 11-ամյա դասընթացն ավարտելով՝ 1947 թ. ընդունվել է ԵՊՀ Բանասիրության ֆակուլտետի Արևելյան լեզուների և գրականության բաժինը: Համալսարանում ուսանելու տարիներին արժանացել է Ավետիք Իսահակյանի և Ստեփանոս Մալխասյանցի անվան կրթաթոշակների:

1952 թ., ավարտելով համալսարանը, աշխատել է գրքի առևտրի և հրատարակչության տարբեր բնագավառներում: 1956 թ. ընդունվել է ՀԳԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Հայ բանահյուսություն» մասնագիտությամբ: 1959 թ., ավարտելով ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով: Նախ աշխատել է Գրականության ինստիտուտում, ապա՝ 1960 թ. տեղափոխվել է Հնագիտության և ազգագրության նորաստեղծ ինստիտուտ, որտեղ և աշխատում է մինչև օրս:

1971 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ «Մանուկ Աբեղյանի կյանքը և գործը» թեմայով: Պաշտոնական ընդդիմախոս, մեծ բանաստեղծ և բանասեր Պարույր Սևակը նրան հետևյալ կերպ է բնութագրել. «...Սարգիս Հարությունյանը գիտության մարդ է. ինչ նյութական ու բարոյական վիճակում էլ լինի այդ գիտությունը, Ս. Հարությունյանը իր ուժերի բոլորանվիրությամբ զբաղվելու է գիտությամբ, որովհետև դա նրա կոչումն է և ոչ թե ապրուստի աղբյուրը: Ավելին, չափազանցում չի լինի, եթե նշենք, որ այսօր նա մեր բանագիտության այն սակավաթիվ կարող ուժերից է, որոնք շարունակում են Մեծն Մանուկ Աբեղյանի գործը՝ կատարելով այն, ինչ թերի է մնացել...»: Եվ իրոք, որքան ճիշտ էին մտքի ու գրչի Վարպետի խոսքերը...

1972 թվականից Ս. Հարությունյանը ղեկավարել է ՀԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման նորաստեղծ բաժինը, որը հետագայում

յամբ (1960) և հանելուկների գիտական համահավաք բնագրերով (1965), որոնք ամբողջական պատկերացում են տալիս գաղտնագրված այդ ժանրի մասին:

Հաջորդը հայ հմայական բանահյուսության ոլորտն է՝ ստեղծված հեղինակի «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» մենագրությամբ (1975), ինչպես նաև՝ «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (2006) հնագույն բնագրերի քննախույզ վերլուծական ուսումնասիրությամբ:

Իր բնույթով նորույթ է հայ առասպելաբանության և ժողովրդական հավատալիքների ոլորտը՝ ստեղծված հեղինակի «Հայ առասպելաբանություն» (2000), «Հայ հին հավատալիքները, պաշտամունքը և կրոնն ու դիցարանը» (2001) բազմաբովանդակ մենագրություններով, ինչպես նաև՝ «ՃՈՒԹ ՎՈՐՏՊՏՉ ՎՈՐՈՒ» (1980-1982) երկհատորյա և «ՃՈՒՏՈՒՄՆԻՎԱՐՍՈՒ ՐՍՉՈՐՖ» (1990) հանրագիտարաններում զետեղված հեղինակի հոդվածներով: Ծանրակշիռ այդ հրատարակությունները գիտական նոր մոտեցումներով վերլուծության են ենթարկում դիցաբանական մի շարք արժեքավոր հարցադրումներ՝ լայն ճանաչում բերելով հեղինակին:

Ուշագրավ է նաև «Սասնա ծռեր» հեքիասվեպի այն նոր գրառումները, որոնք 1971-1973 թթ. ընթացքում Հայաստանի 205 բնակավայրերից գրառել է (81 նոր տարբերակ) Ս. Հարությունյանի գլխավորած գիտական արշավախումբը, որոնց մի մասը Սարգիս Հարությունյանը Արուսյակ Սահակյանի աշխատակցությամբ հրատարակել է «Սասնա ծռեր» հատորներով (հ. Գ, 1974, հ. Դ, 1999)՝ շարունակելով Մանուկ Աբեղյանի և Կարապետ Մելիք-Օհանջանյանի հրատարակած բազմահատորյակը:

Բացի «Սասնա ծռերի» նոր տարբերակների հայտնաբերումից և հրատարակումից, Ս. Հարությունյանը մի շարք ուսումնասիրություններ է նվիրել հայ ժողովրդական վեպի ծագման, ձևավորման, զարգացման խնդիրներին, կազմել ու խմբագրել է հայ ժողովրդական էպոսի համահավաք բնագրերը, տարբերակների գիտական հատընտիրը (1977): Վաստակաշատ գիտնականը Գրականության ինստիտուտի համագործակցությամբ 10 տարիների ընթացքում Երևանում գումարել է միջազգային երեք գիտաժողով՝ նվիրված «Սասնա ծռեր» հայ ժողովրդական էպոսին: Նա իրավամբ վայելում է մերօրյա հայ էպոսագի-

յան ժանրերին՝ առած-ասացվածքներին, հանելուկներին նվիրված հրատարակություններ (2006, 2008):

Ս. Հարությունյանը հայ բանագիտության անցյալի երախտավորներին ևս իր հարգանքի տուրքն է մատուցել. մենագրական մի շարք ակնարկներ է նվիրել անվանի հայագետներ Գարեգին Սրվանձտյանցի, Գարեգին Հովսեփյանցի, Գարեգին Լևոնյանի, Ստեփանոս Մալխասյանցի, Մանուկ Աբեղյանի, Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Արամ Ղանալանյանի կյանքի և հայագիտական գործունեության հետազոտմանը:

Հաջորդ բնագավառը, որտեղ դրսևորվել են Ս. Հարությունյանի գիտակազմակերպչական եռանդն ու կարողությունները, ինստիտուտի բանահյուսական արխիվի տեխնոլոգիական նորագույն մեթոդներով մշակումն է և մանավանդ հայ ժողովրդական 16.000 խողիկների համահավաք բնագրի ստեղծումը, որն իրականացվել է նրա ղեկավարությամբ և բաժնիս գիտաշխատողների երկարամյա ջանքերով, սակայն մնացել է անտիպ:

Վերջին երկու բնագավառները, որտեղ Ս. Հարությունյանն իր կարևոր ավանդներն է ներդրել, նոր հայագիտության պատմության խնդիրներն ու հայ-իրանական գրական, մշակութային կապերի և փոխառնությունների հարցերն են: Առաջինը դա ամբողջությամբ նոր հայագիտության պատմությանը նվիրված Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» ստվարածավալ մենագրությունն է (1970) և «Հայագիտության զարգացումը 1870-1917 թթ.» աշխատությունը՝ հայագիտության տարբեր բնագավառների զարգացման հեռանկարների քննությամբ: Իսկ երկրորդը՝ հայ-իրանական գրական-մշակութային կապերն են, որոնք հանգամանորեն քննված են «Իրան-Նամե» հանդեսում տպագրված նրա ծավալուն հոդվածներում՝ ուշագրավ մեկնաբանություններով:

Իր գիտական ծանրակշիռ վաստակի համար Ս. Հարությունյանը 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ «Գրականագիտություն» մասնագիտությամբ, 2009 թ. արժանացել է ՀՀ Գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման, 1987 թ. ընտրվել է Միջազգային գրուցաբանության ընկերակցության անդամ (Ֆինլանդիա):

Ս. Հարությունյանի մի քանի աշխատությունները թարգմանվել են տարբեր լեզուներով՝ լայն ճանաչում բերելով հեղինակին: Նրա «Հայ առասպելաբանու-

րագրով գիտամանկավարժական ուսանելի ծեռնարկը:

Նա հեղինակ է 30-ից ավելի գրքերի ու մենագրությունների և շուրջ 300 գիտական ու գիտահանրամատչելի հոդվածների: Նրա գիտական ղեկավարությամբ դաստիարակվել են հանրապետության բազմաթիվ ասպիրանտներ ու դիսերտանտներ, որոնցից շատերն այսօր գիտության դոկտորներ ու թեկնածուներ են: Նրա դասական խմբագրությամբ լույս են տեսել բազմաթիվ գիտական արժեքավոր աշխատություններ:

Ս. Հարությունյանը ՀՀ ԳԱԱ Գրականության, նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների անդամ է:

Միաժամանակ նա վարում է ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի պաշտոնը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի հովանավորությամբ, Սարգիս Հարությունյանի ղեկավարությամբ և բաժնի գիտաշխատողների միասնական ջանքերով «Գիտություն» հրատարակչությամբ լույս է տեսել «Կարսի հայոց բանահյուսական մշակույթը» (2013) սովոր ժողովածուն, որտեղ ամփոփված են տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր բանահավաքների կողմից գրառված ժողովրդագիտական տարաբնույթ նյութեր, նույնպես և «Մոկսի հայոց բանահյուսական մշակույթը» (2015) ժողովածուն:

Ի սրտե շնորհավորելով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի բազմաթիվ արժեքավոր աշխատություններով ծանրաբեռն 90-ամյա կյանքի արգասավոր ուղին՝ մաղթում ենք ստեղծագործական նորանոր հաջողություններ և ամենայն բարիք:

Թող երբեմնի Հայոց դիցարանի ամենագոր աստվածները նրան պարգևեն արևշատություն և առասպելական անսպառ ուժ ու կորով՝ իր բոլոր ծրագրերն ու մտահղացումները իրականացնելու համար:

**ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների**  
**դոկտոր,**  
**ՀՀ գիտության վաստակավոր**  
**գործիչ**



## ՀՀ ԳԱԱ-ում փեղի ունեցավ գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի նիստը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) հիմնադրման 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում սույն թվականի հոկտեմբերի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում տեղի ունեցավ Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ԳԱՄԱ) նիստը:

Նիստը գլխավորեց ԳԱՄԱ-ի նախագահ, Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Գուսակովը: Նիստին մասնակցում էին ԳԱՄԱ-ի փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ նախագահ, Ռադիկ Մարտիրոսյանը, ԳԱՄԱ-ի փոխնախագահ, Բելառուսի ԳԱԱ աշխատակազմի ղեկավար Պյոտր Վիտյազը, Ղազախստանի ԳԱԱ նախագահ Մուրատ Ժուրինովը, Ղրղզստանի ԳԱԱ նախագահ Մուրատ Ջուսաթովը, Մոլդովայի գիտությունների ակադեմիայի նախագահ Գեորգի Դուկան, Ռուսաստանի ֆունդամենտալ հետազոտությունների հիմնադրամի գիտության գծով փոխտնօրեն, Ռուսաստանի ԳԱ թղթակից անդամ Իգոր Շերեմետևը, Ուկրաինայի ԳԱԱ փոխնախագահ Սերգեյ Պիրոցկովը, Վրաստանի ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Ռամազ Խուրոժեն, Չինաստանի ԳԱ նախագահ Բաի Չուն Լին:

Ղազախստանի ԳԱԱ նախագահ Մուրատ Ժուրինովը շնորհավորեց ՀՀ ԳԱԱ-ի 75-ամյա հոբելյանի առթիվ և հայտնեց, որ ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ընտրվել է Ղազախստանի ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Քննարկվեցին ԳԱՄԱ-ի անդամ երկրների ռազմավարության, գիտահիմնական գարգացման ծրագրերը: Քննարկվեց ԳԱՄԱ-ի հիմնադիր նախագահ ակադեմիկոս Բորիս Պատոնի անվան մրցանակ սահմանելու մասին որոշման նախագիծը:

ԳԱՄԱ-ի անդամ երկրների ներկայացուցիչները համոզեց եկան իրենց երկրներում գիտության զարգացման գործընթացների մասին զեկուցումներով և առաջարկություններով:

ԳԱՄԱ-ի նախագահ Վլադիմիր Գուսակովը հայտարարեց, որ այդ ելույթների հիման վրա կիրառարկվի ԳԱՄԱ-ի հատուկ տեղեկագիրը:

ԳԱՄԱ-ն միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1993 թ-ին ԱՊՀ երկրների և Վիետնամի գիտությունների ակադեմիաների պոսեդիցիայի միավորման նպատակով: ԳԱՄԱ-ն կոչված է լուծելու կարևորագույն գիտական խնդիրներ, պահպանելու և զարգացնելու պատմականորեն ձևավորված գիտական կապերը: ԳԱՄԱ-ի որոշումները անդամ ակադեմիաների համար խորհրդատվական բնույթ են կրում: ԳԱՄԱ-ի գլխավոր նստավայրը Կիևում է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

## Գաֆեսճեան արվեստի կենտրոնի Խանջյան սրահում տեղի ունեցավ Մեծն Զիվանու գերդաստանին նվիրված գրքի շնորհանդեսը

Հոկտեմբերի 18-ին «Գաֆեսճեան» արվեստի կենտրոնի, Գրիգոր Խանջյան սրահում տեղի ունեցավ Մեծն Զիվանու եղբոր ծոռ Վլադիմիր Բանգոյանի երկու տասնամյակի անխոնջ պրպտությունների արդյունքում ծնված՝ «Դաֆչոնց՝ Բանգոյանների գերդաստանի տոհմաժառը» գրքի շնորհանդեսը, որի կազմակերպման համար ջանք չէր խնայել հեղինակի բոլոր ամերիկայեցի որդի Պողոս Հարությունյանը: Խորհրդանշական է, որ ԱՄՆ-ում գործունեություն ծավալող հաջողակ գործարարի վերադարձը հայաստանյան իրականություն կայացավ հենց գրքի լույս ընծայման առթիվ, քանզի բոլոր ֆինանսական հաջողությունների գրավականը Բանգոյանների տոհմի շառավիղ համդիսացող երիտասարդը համարում է ազգային բարոյա-հոգևոր արժեքների համակարգի պահպանումը:

Հեղինակավոր արվեստագետների, գիտնականների, պետական ու հասարակական գործիչների, գործարարների և պատվելի գերդաստանի անդամների մասնակցությամբ ընթացող միջոցառումը յուրահատուկ ծոներգ էր հայ աշուղական երգարվեստի հիմնադիր, խորագետ ու բարոյախոս աշուղ Զիվանու տաղանդին, նրա արարող կերպարին:

Բազմաթիվ խորիմաստ ելույթներն ուղեկցվում էին հոգեթով երգերի կատարումներով՝ Խանջյանի հոյակերտ կտավներով զարդարված դահլիճի մթնոլորտը պատելով հայոց ազգային արվեստը փառաբանող ջերմ ու հուզառատ զգացումներով:



## Հոբելյանական նիստ ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ նվիրված ՀՀ ԳԱԱ և լեզվի ինստիտուտի 75-ամյակին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նշում է իր հիմնադրման և ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակը՝ ակադեմիայի, Լեզվի ինստիտուտի հիմնադրման ակունքներում կանգնած հայերենագիտության երախտավորներին նվիրված միջոցառումներով:

Հոկտեմբերի 5-ին ինստիտուտում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանին:

Իր ողջույնի խոսքում Լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանը նշեց, որ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը իր հիմնադրման օրվանից շարունակել է հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլերի ավանդները, գիտական գործակցություն է ծավալում ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա հայերենագիտական կենտրոնների հետ և, առաջ մղելով գիտական միտքը, դարձել է նոր շրջանի հայերենագիտության կարևորագույն կենտրոնը:

Բարձր գնահատելով հաստատության ավանդը հայերենագիտության զարգացման գործում և շնորհավորելով լեզվի ինստիտուտի աշխատակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յուրի Մուվարյանը ասաց. «Հպարտությամբ պետք է փաստել, որ ինստիտուտում իրենց կոթողային աշխատանքներն են ստեղծել այնպիսի հզոր հայագետներ, ինչպիսիք են՝ Հրաչյա Աճառյանը, Արարատ Ղարիբյանը, Գրիգոր Ղափանցյանը, Գևորգ Ջահուկյա-

նը և ուրիշներ, իսկ լեզվաբանների հետագա սերունդները նրանց ժառանգության արժանի շարունակողներն են եղել»:

Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը ընդգծեց Լեզվի ինստիտուտի գիտնականների դերը հայերենագիտության զարգացման, լեզվի ամառարտության պահպանման, արևմտահայերենի ուսումնասիրության գործում:

Հայկական համրագիտարանի տնօրեն Հովհաննես Այվազյանը անդրադարձավ Հրաչյա Աճառյանի և Հովհաննես Թումանյանի մասնագրությանը՝ ներկայացնելով երկու մեծերի մտահոգության առարկա դարձած խնդիրները կրթության, գրական լեզվի ու բարբառների գործառության վերաբերյալ:

Հրաչյա Աճառյանի կյանքը և գիտական գործունեությունը ներկայացրեց ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ Գայանե Մսիթարյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ Աճառյանի հիմնարար աշխատություններին՝ նշելով, որ հայագիտության և լեզուների համեմատական քննության բազմազան ոլորտներում դրանք ելակետ և ուղեմիջ են եղել հայ լեզվաբանների ու բանասերների մի շարք սերունդների համար ու դեռ երկար պահպանելու են իրենց գիտական մեծ արժեքը:

Նիստը նշանավորվեց Հրաչյա Աճառյանի կնոջ՝ Սոֆյա Աճառյանի «Իմ հուշերը Աճառյանի մասին» գրքի շնորհանդեսով:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

## ՀԵՏԱԵՐԵՐԱՇԱՐԺ

### Այ քեզ ձանձրալի արարած

Ասում են, թե Մեծն Ալբերտ Էյնշտեյնը առաջացած տարիքում փողոցում ծխախոտի քնթուկներ էր հավաքում, ծխախոտը լցնում ծխամորժի մեջ և... ծխում: Բանն այն է, որ բժիշկները նրան արգելել էին ծխել: Դե էյնշտեյնն էլ գտել էր թաքուն ծխելու ելքը:

Ասում են նաև, որ նա անչափ ծանծրալի մարդ էր: Մի անգամ նա ութնամյա թոռան հետ գնացել է ծուկ որսալու, և լճափին, ուղիղ երեք ժամ թռան համար դասախոսություն է կարդացել օճառի պղպաղակների հատկությունների մաթեմատիկական հաշվարկների մասին:

■ Աշխարհում ամենամեծը 1986 թվականի Ֆլորիդա (ԱՄՆ) նահանգում բացված «Կենդանի ծուկ» ակվարիումն է: Այստեղ պահվում է 190 տեսակի 3 հազար ծուկ: Հենց Ֆլորիդայում է գտնվում նաև Մոնթե-Քեյ ակվարիումը, որի 95 ավազաններում պահվում է ծովային ֆլորայի և ֆաունայի 525 տեսակ: Ակվարիումը բացվել է 1984 թվականին:

■ Աշխարհում ամենահին կենդանաբանական այգին գտնվում է Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում: Այդ զազանանոցը 1752 թվականին ստեղծել է Ֆրանց Առաջին կայսրը, իր տիկնոջ՝ կայսրուհի Մարիա Թերեզայի համար:

Իսկ աշխարհի ամենահին հասարակական կենդանաբանական այգին տեղավորված է Լոնդոնի Ռիչենս պարկում: Այն բացվել է 1931 թվականին: Այսօր այստեղ պահվում է կենդանիների ավելի քան 11 հազար տեսակ:

■ Առանց վանդակների կենդանաբանական այգի ստեղծվել է 1967 թվականին, Ստեյվինգենում (Գերմանիա), Համբուրգից ոչ շատ հեռու: Հիմնադիրը Կարլ Գագենբեկոմն է, որն այգին հղացել էր այնպես, որ կենդանիներին և մարդկանց բաժանեն ջրով լցված խրամատները:

■ Պարզվել է, որ որոշ բակտերիաներ դիմանում են 6,5 միլիոն ռենտգեն ռադիացիոն ճառագայթման: Հիշեցնենք, որ այս թիվը 10 հազար անգամ գերազանցում է մարդու համար մահացու չափաբաժինը: 1983 թվականի մարտին ամերիկացի կենսաբան Ջոն Բարրասը ծմբային խորը մատվածքներում հայտնաբերեց միկրոօրգանիզմներ, որոնք գոյատևում են 300 աստիճան ջերմության պայմաններում:

## Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼԵԱՆ**

**Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76**

**Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:**

**Ստորագրված է տպագրության՝ 19.10.2018 թ.:**

"ГИТУТИОН" ("Найка") газета НАН РА